պատմագրքում ընդգրկված վկայաբանությունների ավարտաբանությունը թվագրում է, թե կոնկրետ որ թվականին և որ օրը տեղի ունեցավ տվյալ վկայի նահատակությունը: Ինչպես՝ «Եւ եղև կատարումն նահատակութեան երանելի առնս Աւետիս ի թուականութեանս մերում ՌՃԵ. յամսեանն մարտի Ի.» (էջ 420–421):

«Վասն նահատակութեան Տէր Անդրէաս քահանային» վկայաբանությունը, որ Դավրիժեցու պատմագրքի ԻԷ գլուխն է միևնույն ժամանակ, տարբերվում է մյուս վկայաբանություններից, թեպետ սրան ևս բնորոշ են որոշ կաղապարային միավորներ: Մանուկ Աբեղյանն էլ առանձնահատուկ վերաբերմունք ունի այս վկայաբանության հանդեպ. «...ամենից գեղեցիկն է, և նախնի վկայաբանությունների հետ կարող է մրցել»[31]: Այն նախ առանձնանում է նրանով, որ իր բովանդակությամբ առնչվում է բուն պատմությանը, և այստեղ հատվում են պատմության մի քանի բովանդակային գծեր՝ կապված Շահ-Աբասի գործունեության, հայերի հանդեպ նրա վարած քաղաքականության, ինչպես նաև Մովսես և Պողոս վարդապետների հոգևոր գործունեության հետ: Այդ պատճառով «Վասն նահատակութեան Տէր Անդրէաս քահանային» գլուխը ստացվել է ավելի շատ պատմական դեպքերի վկայագրություն, քան վկայաբանություն, բայց քանի որ նյութը հարազատ է եղել վկայաբանական գրականությանը, ապա անխուսափելիորեն տեքստ են ներբերվել համապատասխան տարրեր:

Բացակայում են հակիրճ վարքն ու դիմանկարը: Սյուժեն կենտրոնացված ու միատարր չէ, հընթացս ընդգրկում է տեղեկատվական բնույթի հավելումներ: Այստեղ ավելի շատ հերոսի ինքնազոհաբերում է հանուն հանուրի, քան կոնֆլիկտ քրիստոնյայի ու մահմեդականի միջև: Դատարանի տեսարանը բացակայում է, փոխարենը վկային հարցաքննում է անձամբ Շահ-Աբասը: Եվ միայն Շահ-Աբասի ու տեր

---

[31] ***Մանուկ Աբեղյան,*** Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, էջ 449: